# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էյչ Գրուպ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/44 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Canon | MF 463DW | Canon | Սույն տեխնիկական բնութագիրը սահմանում է մատակարարման ենթակա լազերային ցանցային բազմաֆունկցիոնալ սարքի նվազագույն տեխնիկական, գործառութային և երաշխիքային պահանջները: Տպման տեխնոլոգիան՝ մոնոխրոմ լազերային: Տպման արագությունը՝ առնվազն 40 էջ/րոպե՝ A4 ձևաչափով: Երկկողմանի տպագրության արագությունը՝ առնվազն 33 պատկեր/րոպե՝ A4 ձևաչափով: Տպման թույլտվությունը՝ առնվազն 1200 x 1200 dpi: Առաջին էջի դուրս գալու ժամանակը՝ ոչ ավելի քան 6 վայրկյան: Տաքացման ժամանակը՝ միացումից հետո ոչ ավելի քան 14 վայրկյան: Պարտադիր պետք է ապահովի ավտոմատ երկկողմանի տպագրություն: Տպիչի լեզուներ՝ առնվազն PCL5e, PCL6, PostScript 3: Պետք է ապահովի USB կրիչից տպագրություն: Պետք է ապահովի բջջային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տպագրության հնարավորություն՝ iOS և Android համակարգերից կամ արտադրողի պաշտոնական հավելվածի/համարժեք լուծման միջոցով: Պատճենահանման արագությունը՝ առնվազն 40 էջ/րոպե՝ A4 ձևաչափով: Երկկողմանի պատճենահանման արագությունը՝ առնվազն 33 պատկեր/րոպե՝ A4 ձևաչափով: Առաջին պատճենի դուրս գալու ժամանակը՝ ոչ ավելի քան 7 վայրկյան: Պատճենահանման թույլտվությունը՝ առնվազն 600 x 600 dpi: Պարտադիր պետք է ապահովի ավտոմատ երկկողմանի պատճենահանում: Պետք է ապահովի Կրճատում/խոշորացում՝ 25–400%՝ 1% քայլով: Պետք է ապահովի նույնականացման քարտի պատճենահանում, 2-ը 1-ի վրա, 4-ը 1-ի վրա, պատճենների համադրում : Սկանավորման ռեժիմներ՝ գունավոր և սև-սպիտակ: Օպտիկական սկանավորման թույլտվությունը՝ առնվազն 600 x 600 dpi: Ընդլայնված սկանավորման թույլտվությունը՝ առնվազն 9600 x 9600 dpi կամ համարժեք: ADF՝ առնվազն 50 թերթ տարողությամբ: Պարտադիր պետք է ապահովի ավտոմատ երկկողմանի սկանավորում: Սկանավորման արագությունը 300 x 300 dpi ռեժիմում՝ միակողմանի մոնոխրոմ՝ առնվազն 50 էջ/րոպե, միակողմանի գունավոր՝ առնվազն 40 էջ/րոպե, երկկողմանի մոնոխրոմ՝ առնվազն 100 պատկեր/րոպե, երկկողմանի գունավոր՝ առնվազն 80 պատկեր/րոպե: Սկանավորման արագությունը 300 x 600 dpi ռեժիմում՝ միակողմանի մոնոխրոմ՝ առնվազն 40 էջ/րոպե, միակողմանի գունավոր՝ առնվազն 20 էջ/րոպե, երկկողմանի մոնոխրոմ՝ առնվազն 80 պատկեր/րոպե, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | երկկողմանի գունավոր՝ առնվազն 40 պատկեր/րոպե: Գունավոր սկանավորման խորությունը՝ առնվազն 24 բիթ, մոխրագույն սանդղակ՝ առնվազն 256 մակարդակ: Համատեղելիություն՝ TWAIN, WIA, ICA կամ համարժեք: Սկանավորման լայնությունը՝ առնվազն 216 մմ: Սկանավորում դեպի էլ. փոստ, համակարգիչ, USB կրիչ, FTP, SMB կամ ցանցային թղթապանակ: Սկանավորման ձևաչափեր՝ PDF, JPEG, TIFF, ինչպես նաև Compact PDF, Searchable PDF, կոդավորված PDF կամ համարժեք: Ստանդարտ թղթի մուտքագրում՝ առնվազն 250 թերթ հիմնական կասետ, 100 թերթ բազմաֆունկցիոնալ սկուտեղ և 50 թերթ ADF: Լրացուցիչ թղթի կասետի տեղադրման հնարավորություն՝ առնվազն 500 թերթ: Աջակցվող ձևաչափեր՝ A4, A5, A6, B5, Letter, Legal և կարգավորելի չափեր: Երկկողմանի տպագրության ձևաչափեր՝ առնվազն A4, Letter, Legal: Միացումներ՝ USB 2.0 High Speed, Gigabit Ethernet 10/100/1000Base-T, Wi-Fi, Wi-Fi Direct կամ համարժեք: Համատեղելիություն՝ Windows 10/11, Windows Server 2016 կամ ավելի նոր : Ցանցային արձանագրություններ՝ առնվազն TCP/IP, LPD, Port9100, IPP/IPPS, SNMPv1/SNMPv3 : Սկանավորում՝ FTP, SMB և էլ. փոստ՝ SMTP արձանագրությամբ: Անվտանգություն՝ HTTPS/IPPS, TLS 1.2 կամ ավելի բարձր, IP հասցեների զտում, IEEE 802.1X կամ համարժեք: Անլար կապի անվտանգություն՝ WPA2 կամ ավելի բարձր: Առնվազն հեռավար կառավարման վեբ միջերես: Տոների/քարթրիջի վիճակի մոնիտորինգի հնարավորություն: Առաջարկվող ամսական տպման ծավալը՝ առնվազն մինչև 4000 էջ կամ ավելի: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Առավելագույն ամսական բեռնվածությունը՝ առնվազն 80,000 էջ: Պրոցեսորի արագությունը՝ առնվազն 1200 ՄՀց ։ Հիշողություն՝ առնվազն 1 ԳԲ: Ներքին պահեստավորում՝ առնվազն 4 ԳԲ eMMC կամ համարժեք՝ անվտանգ տպագրության, սկանավորման և ցանցային գործառույթների ապահովման համար։ Կառավարման վահանակ՝ առնվազն 12.7 սմ գունավոր սենսորային էկրանով։ Սնուցում՝ 220–240V AC, 50/60Hz կամ ավելի լայն միջակայք ։ Աշխատանքային ջերմաստիճան՝ 10–30°C կամ ավելի լայն միջակայք։ Աղմուկի մակարդակը աշխատանքային ռեժիմում՝ ոչ ավելի քան 55 դԲ։ Մատակարարվող քարթրիջը պետք է լինի արտադրողի օրիգինալ, նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ։ Քարթրիջի տպման ռեսուրսը՝ առնվազն 3000 էջ՝ ISO/IEC 19752 կամ համարժեք մեթոդաբանությամբ։ Սարքը պետք է աջակցի բարձր ռեսուրսով քարթրիջների օգտագործմանը՝ առնվազն 10,000 էջ։ Փաթեթը պետք է ներառի բազմաֆունկցիոնալ սարք, սնուցման մալուխ, քարթրիջ, օգտագործողի փաստաթղթեր կամ արագ մեկնարկի ուղեցույց, անհրաժեշտ ծրագրային ապահովման կամ ներբեռնման հղումների վերաբերյալ տեղեկատվություն։ Սարքի հետ պետք է մատակարարվի առնվազն 2 մետր երկարությամբ USB միացման մալուխ։ Երաշխիքային ապահովում և սպասարկում • Երաշխիքային սպասարկում մեկ տարի • Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում (Սպասարկումը՝ Երևան, Չաքյան 8) և արտադրողի կամ արտադրողի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | լիազորված ներկայացուցչի տեղեկանք այն մասին, որ ապրանքը նախատեսված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար: (ՄԱՖ կամ ԴԱՖ): Պարտադիր պայման՝ Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Մատակարարվող բոլոր սարքավորումները պետք է ունենան հստակ նույնականացվող արտադրող և մոդել: Արտադրողի պաշտոնական կայքէջում պետք է հասանելի լինեն տվյալ սարքավորման տեխնիկական բնութագիրը և անհրաժեշտ ծրագրային ապահովումը: Սարքավորումները չպետք է լինեն արտադրողի կողմից հայտարարված (End of Life / End of Support) կարգավիճակում: Չի թույլատրվում մատակարարել անանուն, առանց արտադրողի և մոդելի հստակ նշման կամ արտադրողի կողմից շրջանառությունից և սպասարկումից հանված սարքավորումներ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Эйдж Групп ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/44 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | |